ՀՏԴ 796. 325 DOI: 10.53068/25792997-2025.1.14-37

«ԿՈՒՅՐ» ՖՈՒՏԲՈԼԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ս.Ս. Հակոբյան[1], Ա.Մ. Մեսրոպյան[2], Հ.Դ. Մինասյան[3]

[1,2] Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան,

[3] Երևանի պետական բժշկական համալսարան, Երևան, Հայաստան

Առանցքային բառեր: «Կույր» ֆուտբոլ, ադապտիվ սպորտ, հարցում, կույր և տեսողական խանգարումներ ունեցող անձինք, մարզիչներ:

Հետազոտության արդիականություն: «Կույր» ֆուտբոլը՝ որպես ադապտիվ սպորտի տեսակ, նպատակաուղղված է տեսողության խանգարումներ ունեցող անձանց մոտ՝ սպորտային մշակույթի ձևավորմանը, առողջ ապրելակերպի, մարզական հմտությունների ձեռքբերմանը, հասարակության մեջ ինտեգրմանը:

Խաղային և մարզումային գործունեությունը ֆուտբոլում շարունակական բնույթ է կրում, որը համակողմանի ազդեցություն ունի պարապողների օրգանիզմի վրա, մշակում է շարժողական ընդունակությունները, խթանում է ֆունկցիոնալ հնարավորությունների աճը, ձևավորում տարբեր շարժողական ընդունակություններ: Բնակլիմայական զանազան պայմաններում մարզվելն ու խաղալը նպաստում են ֆիզիկական կոփմանը, բարձրացնում են մարզիկի դիմադրողականությունը հիվանդությունների նկատմամբ, նրա օրգանիզմի հարմարվողականությանը:

Միաժամանակ անձի մեջ դաստիարակվում է առօրյա աշխատանքային և մարզական ռեժիմներին մշտական հետևելու հատկություն: Ֆուտբոլը նպաստում է առողջ ապրելակերպի ձևավորմանը, ստեղծագործական գործունեության երկարատևությանը, իսկ խաղի մրցակցական բնույթը, բաձր հուզականությունը և բազմաթիվ գործոնները ֆուտբոլը դարձնում են ակտիվ հանգստի լավագույն միջոցներից մեկը [1,4]:

Հատուկ գիտամեթոդական գրականության վերլուծությունը վկայում է «կույր» ֆուտբոլը՝ որպես տեսողության խանգարում ունեցող անձանց սոցիալիզացիայի ոչ բավարար ուսումնասիրության մասին:

Մարդու շարժումների, ինչպես նաև ամբողջ հոգեկանի զարգացման վրա էական ազդեցություն ունի տեսողական համակարգի վիճակը [1, 3,4,7]:

Խոսելով չտեսնողների շարժողական ցածր ակտիվության մասին՝ տիֆլոմանկավարժ Ֆրիդրիխ Ցեխը (1934) գրել է, որ պայմանավորված ֆիզիկական վիճակով՝ չտեսնելու հետևանքները սահմանափակում են մարդու շարժումների ազատությունը: Բնութագրելով քայլքը՝ հեղինակը նշում է, որ նրանց մեծ մասը չկողմնորոշվող են և սեփական շարժումներում՝ վախկոտ:

Անգլիացի տիֆլոմանկավարժ Թոմաս Արմիտեջը կարծում է, որ չտեսնելն առաջին հերթին սահմանափակում է մարդու շարժունակությունը, քանի որ խանգարվում է տարածության մեջ ազատ կողմնորոշվելու ունակությունը, իսկ այս ամենը հանգեցնում է ֆիզիկական զարգազման խանգարման:

Որոշ հեղինակներ [2,5,6] իրենց աշխատություններում նշում են, որ տեսողության լրիվ կամ մասնակի կորուստն առաջացնում է տարածության մեջ շարժվելու դժվարություններ: Հեղինակները կարծում են, որ չտեսնողների կամ թույլ տեսնողների քայլվածքը տարբերվում է տեսնողների քայլվածքից: Ըստ նրանց՝ չտեսնող երեխաները շարժումներ կատարելու առաջին փորձերի ժամանակ դժվարությամբ են կոորդինացնում ձեռքի և ոտքի շարժումները, մի ոտքից մյուսին անցնելու ընթացքում մարմինը տեղափոխելը, հաճախ ընկնում են:

Ըստ մի շարք այլ հեղինակների տվյալների [1,2,3,5,6]՝ տեսողության խանգարում ունեցող երեխաների հիմնական ուժի ցուցանիշները նորմալ տեսնող իրենց հասակակիցների համեմատ ցածր են 7.2 %-ից մինչև 32.6 %-ով, իսկ դաստակինը՝ 28.1% փաստումով: Հետազոտությունները փաստում են, որ համեմատաբար ցածր մակարդակում են գտնվում չտեսնող և թույլ տեսնող դպրոցականների շարժման արագության բոլոր դրսևորումները (շարժումների ռեակցիան, առանձին շարժումների հաճախականությունը և ամբողջականությունը): Նրանք փաստում են, որ տեսողության խանգարումն ազդում է ոչ միայն երեխայի տոկունության վրա, այլև տարիքային զարգացման տեմպի վրա:

Տեսողական խանգարում ունեցող երեխաների ոչ բավարար ֆիզիկական զարգացումը, մկանային համակարգի թուլությունը հանգեցնում են կեցվածքի խանգարման:

Բացի շարժամկանային համակարգի խանգարումներից, չտեսնող և թույլ տեսնող երեխաներն ունեն նաև առողջական այլ խանգարումներ, օրինակ՝ խանգարված է լինում նրանց շնչառական, սրտանոթային համակարգերը:

Կուրությունը և թույլ տեսողությունը, ինչպես նաև տեսողական համակարգի գործառույթի խանգարումները զգալիորեն նվազեցնում են նրանց՝ առօրյա կյանքում էական դեր ունեցող աշխատանքային, սոցիալ-կենցաղային և հատուկ ունակությունների և կարողությունների դրսևորման հնարավորությունները [2,3,4,5,6]:

Ֆիզիկական վարժությունների կիրառումը նպաստում է մկանային ակտիվությանը, խթանում է ֆիզիկական գործընթացները, ձևավորում է մարմնի նոր ֆունկցիոնալ վիճակ, որը հարմարվում է թերությանը, օգնում է փոխհատուցել խանգարված գործառույթները, և հարմարեցնել վեգետատիվ համակարգերը ֆիզիկական գործունեությանը, բարելավում է պահեստավորված գործառույթների, մասնավորապես՝ զգայական համակարգերի գործունեությանը:

2017 թվականից կույրերի միջազգային ֆեդերացիայի (IBSA) նախաձեռնությամբ Հայաստանում փորձում են զարգացնել «կույր» ֆուտբոլը՝ համագործակցելով Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտեի հետ [8, 9, 10]:

Փորձառու մարզիչները մի քանի մարզում են անցկացնում Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան թիվ 14 հատուկ դպրոցում: Ծրագիրը դադարեցվում է մինչև 2019 թվականը: Նույն տարվա գարնանը կույրերի միջազգային ֆեդերացիան սկսում է համագործակցել ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիայի հետ:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրել «կույր» ֆուտբոլի արդի վիճակը Հայաստանի Հանրապետությունում և նախանշել այն հետագայում ընդլայնելու միտումները:

Հետազոտության խնդիրները: 1. Բացահայտել «կույր» ֆուտբոլում ընդգրկված անձանց քանակական կազմը և տալ նրանց մարզական միջոցառումների մասնակցության որակական գնահատականը:

2. Ուսումնասիրել և վեր հանել «կույր» ֆուտբոլի հետագա զարգացմանը միտված նյութատեխնիկական բազայի, ենթակառուցվածքների առկայությունը և նախանշել միջոցներ և ուղիներ՝ այն բարելավելու ուղղությամբ:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Առաջադրված խնդիրների իրականացման համար օգտագործվել են համապատասխան մեթոդներ՝ 1. հասանելի գրական աղբյուրների ուսումնասիրություն, 2. սոցիոլոգիական հարցում, 3. ստացված արդյունքների մաթեմատիկական վիճակագրական վերլուծություն:

Հետազոտության նպատակի և խնդիրների իրականացման նպատակով անցկացրել ենք սոցիոլոգիական

հարցում: Կազմել ենք հարցաթերթիկներ կույր և տեսողության խանգարում ունեցող անձանց և տարբեր ակումբներից («Փյունիկ», «Ուրարտու», «ՀՖՖ ակադեմիա») մարզիչ–մանկավարժների մասնակցությամբ:

Հետազոտությունը կազմակերպել և անցկացրել ենք երեք փուլով:

Առաջին փուլում (նոյեմբեր-դեկտեմբեր, 2022թ.) ուսումնասիրել ենք հիմնախնդրի վերաբերյալ անհրաժեշտ գրական աղբյուրները:

Երկրորդ փուլում (փետրվար-օգոստոս, 2023թ.) կազմել ենք անանուն հարցաթերթիկ երկու խումբ հարցվողների (կույր և տեսողական խանգարումներ ունեցողների և մարզիչ–մանկավարժների) համար:

Երրորդ փուլում ամփոփել ենք հետազոտության արդյունքները, վերլուծել ենք այն և տվել համապատասխան գնահատական:

Ընդհանուր առմամբ հարցմանը մասնակցել են 18 կույր և տեսողական խնդիրներ ունեցող անձինք և 12 մարզիչ-մանկավարժներ:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Հիմնախնդրի համակողմանի ուսումնասիրության և հավաստի պատասխաններ ակնկալելու նպատակով կազմվեց հարցաթերթիկ կույրերի և տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար և ստացանք հետևյալ պատասխանները.

Տեղյակ են արդյո՞ք ինչ նշանակություն ունի ֆուտբոլը նրանց համար: Հարցվողների ավելի քան 45,2 % գտնում են, որ այն դրական ազդեցություն կունենա իրենց առողջության ամրապնդման համար: 35,6% գտնում են, որ կլինեն ամրակազմ, 26 % այն կարծիքին են, որ կնպաստի մարմնակազմությանը (աղյուսակ 1):

Աղյուսակ 1.

Ֆուտբոլի դերը և նշանակությունը կույրերի և տեսողության խնդիրներ ունեցող անձանց առօրյայում

	Հարցվողների պատասխանները	Քանակը՝ 18	
		պատասխան	տոկոս %
1.	առողջության ամրապնդում	9	45,2
2.	կլինեն ֆիզիկապես ավելի ամրակազմ	7	35,6
3.	կնպաստի մարմնակազմությանը	5	26,0
4.	կնպաստի աշխատասիրության բարելավմանը	2	8,2
5.	կամային որակների դաստիարակում	4	23,8

Այն հարցին, թե ինքներդ կցանկանաք զբաղվել ֆուտբոլով, դրական են պատասխանել 58 %, ոչ՝ 31 % և 11 % դժվարացել են պատասխանել:

Մեր հաջորդ հարցն ուղղված էր՝ բացահայտելու մասնագիտական կողմնորոշմանը՝ թե արդյոք կցանկանային դառնալ «կույր» ֆուտբոլային թիմի մարզիչ: Ցանկություն են հայտնել մարզիչ դառնալ 18 %–ը, 29 %–ը ցանկություն չեն հայտնել, իսկ մյուսները՝ 53 %–ը դժվարացել են տալ կոնկրետ պատասխան, որը կարելի է դիտարկել որպես չցանկանալու փաստ:

Այն հարցին, թե ում խորհրդով սկսեցիք մարզվել ֆուտբոլով, տրվեցին հետևյալ պատասխանները. ծնողների՝ 25 %, ֆիզկուլտուրայի ուսուցչի՝ 12,5 %, ընկերների՝ 12,5 %, ինքս եմ ընտրել՝ 50 %:

Մեզ շատ էր հետաքրքրում այն հարցը, թե որքանով է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան նպաստում «կույր» ֆուտբոլի զարգազմանը: Արդյունքներն ամփոփված են 2–րդ աղյուսակում:

Աղյուսակ 2

ՀՖՖ մասնակցությունը կույր ֆուտբոլի զարգացմանը

	Հարցվողների պատասխանները	Քանակը՝ 16	
		պատասխան	տոկոս %
1.	աջակցում է	8	50
2.	չի աջակցում	1	6,7
3.	աջակցում է մասամբ	5	30,1
4.	դժվարանում եմ պատասխանել	2	13,2

Մեր աշխատանքում բացահայտել ենք այն դրդապատճառները, որոնք նպաստում են ակտիվ զբաղվել ֆուտբոլով (աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Ֆուտբոլով պարապելու դրդապատճառները

	Հարցվողների պատասխանները	Քանակը՝ 18	
		պատասխան	տոկոս (%)
1.	բարելավել ֆիզիկական պատրաստությունը	11	60
2.	սիրում է ֆուտբոլը	9	50
3.	մասնակցություն տարբեր մրցաշարերի	9	31,4
4.	ինտեգրումը հասարակության մեջ	14	76

Գիտական հետազոտություններում ընդունված է այն թեզը, որ եթե միևնույն երևույթն ուսումնասիրվում է տարբեր ռեսպոդենտների հարցման միջոցով, ապա այն թույլ է տալիս ստանալ ավելի օբյեկտիվ ինֆորմացիա ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ: Այդ նկատառումով հարցում ենք անցկացրել մարզիչ-մանկավարժների շրջանում, որոնց մենք դիտարկում ենք որպես փորձագետներ:

Մեր այն հարցին, թե ինչպես եք վերաբերվում «կույր» ֆուտբոլին, նրանց 64 % տվել է դրական պատասխան, 24 % չեն կողմնորոշվում իրենց պատասխաններում, իսկ 12 % դեմ է կույր ֆուտբոլին:

Մեր հաջորդ հարցն անմիջականորեն ուղղված էր՝ բացահայտելու, թե արդյոք Հայաստանի Հանրապետությունում «կույր» ֆուտբոլն ունի հետագա զարգացման հեռանկարներ: Հարցման արդյունքների վերլուծությունից պարզ դարձավ, որ 52 % այն կարծիքին է, որ այն ունի զարգացման հեռանկարներ, 48% գտնում է, որ այն առայժմ չունի զարգացման համար համապատասխան պայմաններ: Միևնույն ժամանակ վերջիններս պնդում են, որ դեռ հասարակության շրջանում առկա է այն կարծրատիպը, որ ֆուտբոլը հասու չէ կույր և տեսողական խանգարումներ ունեցող անձանց համար:

Մեր հիմնախնդրի կարևորագույն հարցերից էր բացահայտել այն հիմնական նախապայմանները, որոնք հիմք կարող են հանդիսանալ Հայաստանի Հանրապետությունում «կույր» ֆուտբոլի հետագա զարգացման համար: Փորձագետ մարզիչներին առաջադրված 10 հարցապնդումների տարբերակներից՝ ըստ նախապատվության, ստացել ենք հետևյալ արդյունքները.

Հարցվողների 28% գտնում է որ անհրաժեշտ է հետագայում անցկացնել հանրապետական մրցաշարեր և առաջնություն, 64%՝ համապատասխան ենթակառուցվածքների ստեղծում, 56 %՝ մարզիչների վերապատրաստում, 52 %՝ զարգացնել կույր ֆուտբոլը մարզերում և համայնքներում, 48%՝ կատարել ֆինանսական ներդրումներ, 44 %՝ կազմակերպել քարոզչական աշխատանքներ, հրատարակել գիտամեթոդական գրականություն:

Մեր կողմից արծածված հիմնահարցը վեր հանեց բազում բացթողումներ, որոնք հրատապ լուծում են պահանջում:

Այսպիսով՝ հարցման արդյունքների վերլուծությունը հստակ ցույց է տալիս, որ «կույր» ֆուտբոլի զարգացման համար անհրաժեշտ է մշակել ռազմավարական ծրագիր, որն ըստ հարցվողների՝ պետք է ներառի հետևյալ գործոնները (աղյուսակ 4):

Աղյուսակ 4.

«Կույր» ֆուտբոլի զարգացման միջոցառումներ

	Հարցվողների պատասխանները	Քանակը՝ 18	
		պատասխան	տոկոս (%)
1.	մարզիչների պատրաստում և վերապատրաստում	9	45,8
2.	համապատասխան մարզաբազաների և ենթակառուցվածքների կառուցում	12	60,1
3.	կազմակերպել քարոզչական և պրոպագանդման աշխատանքներ	6	30,1
4.	նպաստել «կույր» ֆուտբոլի տարածմանը և զարգացմանը համայնքներում և մարզերում	10	50,2
5.	Հանրապետությունում ներդնել աշխարհի զարգացած երկրների փորձը, հրավիրել մասնագետ հրահանգիչներ՝ տեղում սեմի-նարներ կազմակերպելու և անցկացնելու նպատակով	11	56,0
6.	կատարել ֆինանսական ներդրումներ՝ ընդգրկելով տեղական և օտարազգի հովանավորների	9	45,8
7.	փորձել անցկացնել հանրապետական առաջնություններ	13	66,0
8.	Ֆուտբոլիստների խրախուսում	12	60,1

Եզրակացություն: Ելնելով թեմային առնչվող գրական աղբյուրների, Միջազգային կազմակերպության կոնվենցիայի, կույրերի և տեսողական խնդիրներ ունեցող անձանց միջազգային ֆեդերացիայի կանոնակարգի դրույթների ուսումնասիրությունից, մեր կողմից անցկացված հետազոտությունների արդյունքների ամփոփումից և վերլուծությունից՝ հանգեցինք հետևյալ եզրակացության.

1. «Կույր» ֆուտբոլով մարզվող ֆուտբոլիստ-ֆուտբոլիստուհիների կարևորագույն նպատակներից է հասարակության լայն շրջանակներում ինտեգրվելը, հարմարվողականությունը, տարածության և ժամանակի զգացողությունը, համակողմանի ներդաշնակ

ֆիզիկական զարգացումը, հանդուրժողականությունը, դրական և անվտանգ միջավայրի ստեղծումը, բարոյահոգեբանական արգելքների հաղթահարումը, սոցիալական հավասարության իրավունքների կիրառումը և այլ սկզբունքներ:

2. «Կույր» ֆուտբոլի հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում վստահություն չի ներշնչում հետագա մարզաձևի զարգացմանը և մասսայականացմանը, քանզի ՀՖՖ-ի կողմից չի ստեղծված համապատասխան պայմաններ, մարզիչների վերապատրաստումը պատշաճ մակարդակի չէ, չնայած այն հանգամանքին, որ հավաքական թիմը մասնակցել է երկու միջազգային մրցաշարերի՝ Հայաստանում և Շվեդիայում:

3. Ցավով ենք շեշտում, որ 2023թ. մարտ ամսից ՀՖՖ կողմից դադարեցվեց «կույր» ֆուտբոլի գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում:

🕮 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ազարյան Ռ.Ն., Տեսողության խանգարումով երեխաների առողջության ամրապնդման և ֆիզիկական դաստիարակության մեթոդիկա, Ուսումնական ձեռնարկ, Զանգակ – 97, Երևան, 2009, 397 էջ:
2. Абрамов Л.П., Нормативные и руководящие документы по реабилитации инвалидов по зрению средствами физической культуры и спорта.- М,, Советский спорт. 2005, с, 376
3. Атройнова Н.В., Давыдова А.А., Чикун Д.А., Шернина Л. Н. Особенности преподования физической культуры слепым и слабовидящим обучающимся, Санкт Петербург, ГБОУ школа-интернат N 1, 2020, с, 40
4. Демирчоглян Г.Г., Демирчоглян А.Г., Специальная физическая культура для слабовидящих школьников.- М., 2000. Советский спорт, с 11-48
5. Сермеев Б.Н., Физическое воспитание детей с нарушением зрения. Киев, 1987, «Здоровье», с 7-19
6. Маллаев Д. М., Игра для слепых и слабовидящих. М. Советский спорт, 2002, с 368-374
7. Толмачев Р.А., Адаптивная физическая культура и реабилитация слепых и слабовидящих.- М., Советский спорт. 2004, с. 108
8. Паралимпийский вестник, 2005, 6, с. 14
9. Источник IBSA – результаты.- 2017, с. 32
10. Источник IBSA – результаты.- 2018, с. 18

THE CURRENT STATE OF BLIND FOOTBALL IN THE REPUBLIC OF ARMENIA

S. S. Hakobyan[1], A. M. Mesropyan[2], H. D. Minasyan[3]
[1, 2] Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia, [3] Yerevan State Medical University, Yerevan, Armenia

ABSTRACT

Keywords: Blind football, adaptive physical culture, five-a-side football, training process, methodology, scientific-methodological, visual system.

Research relevance: Football for the blind, as a type of adaptive sport, is aimed at the formation of sports culture among people with visual impairments, the acquisition of a healthy lifestyle, sports skills, and integration into society.

Research aim: The purpose of the research is to study and identify the current situation of Football for the blind in the Republic of Armenia and outline its trends for future expansion.

Research Methods and Organization:

1. research of available literary sources
2. sociological survey
3. mathematical and statistical analysis of the results obtained.

We organized and conducted it in three stages: from November-December 2023 to February-August 2024. A total of 18 blind and visually impaired people and 12 coaches and teachers took part in the survey.

Research results analysis: The analysis of the results of a sociological survey revealed that the majority of respondents have a positive attitude towards the inclusion of people with visual impairments to football. However, for the development of blind football, it is necessary to develop a strategic plan that includes the development of infrastructure and sports facilities, the training and retraining of coaches, and a number of other factors. To get more objective information about the problem, we conducted a survey among coaches and teachers who were considered experts in the field.

Conclusion

1. The prospects for the development of blind football in the Republic of Armenia are not promising, as appropriate conditions have not been established by the Football Federation of Armenia (FFA).

2. It should be noted that since March 2023, the FFA has suspended the activities of blind football in Armenia.

ОСОБЕННОСТИ ФУТБОЛЬНЫХ ТРЕНИРОВОК У ЛЮДЕЙ С НАРУШЕННЫМ ЗРЕНИЕМ

С.С. Акопян[1], А.М. Месропян[2], Г.Г. Минасян[3]

[1, 2] Государственный институт физической культуры и спорта Армении, Ереван, Армения,

[3] Ереванский государственный медицинский университет, Ереван, Армения

АННОТАЦИЯ

Ключевые слова: футбол для слепых, адаптивный спорт, опрос, слепые и слабовидящие, тренеры.

Актуальность исследования. Футбол слепых, как вид адаптивного спорта, направлен на формирование спортивной культуры у людей с нарушениями зрения, приобретение здорового образа жизни, спортивных навыков, интеграцию в общество.

Цель исследования: изучить состояние футбола для слепых в Республике Армения и определить тенденции развития.

Методы и организация исследования. 1. исследование доступных литературных источников, 2. социологический опрос, 3. математическо-статистический анализ полученных результатов.

Мы организовали и провели его в три этапа: с ноября-декабря 2023 года по февраль-август 2024 года. Всего в опросе приняли участие 18 слепых и слабовидящих лиц и 12 тренеров-педагогов.

Анализ результатов исследования: Анализ результатов социологического опроса показал, что большинство респондентов положительно относятся к приобщению к футболу людей с нарушением зрения. Однако для развития футбола

слепых необходима разработка стратегического плана, включающего строительство инфраструктуры и спортивных баз, подготовку и обучение тренеров и ряд других факторов.

Чтобы получить более объективную информацию о проблеме, мы провели опрос среди тренеров-педагогов, которых считали экспертами.

Краткие выводы: 1. Перспективы футбола для слепых в РА не внушают доверия для дальнейшего развития данного вида спорта и массовости его развития, потому что со стороны ФФА не созданы соответствующие условия. 2. Следует отметить, что с марта 2023 года, со стороны ФФА была прикрашена деятельность футбола для слепых в Республике Армения.

Տեղեկություններ հեղինակների մասին

Սամսոն Սուրիկի Հակոբյան՝ մ.գ.թ., Ֆուտբոլի ամբիոնի պրոֆեսոր, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E.mail: samson.hakobyan@sportedu.am

Արմինե Մեսրոպի Մեսրոպյան՝ ՖԴՏ մեթոդիկայի և ԱՖԿ ամբիոնի մագիստրանտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E.mail: armine.mesropyan.2017@mail.ru,

Հայկ Դավիթի Մինասյան՝ Ֆիզիկական դաստիարակության ամբիոնի դասախոս, Երևանի պետական բժշկական համալսարան, Երևան, Հայաստան,

E.mail: h.minasyan 88 Gmail.ru

Information about the authors

Samson Surik Hakobyan - PhD of Pedagogy, Professor of the Chair Football; Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia,

E.mail: samson.hakobyan@sportedu.am

Armine Mesrop Mesropyan- Master's Student, Chair of Physical Education Theory, Methodology, and Adaptive Physical Culture, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia, E.mail: armine.mesropyan.2017@mail.ru

Hayk Davit Minasyan-Lecturer, Chair of Physical Training, Yerevan State Medical University, Yerevan, Armenia, E.mail: h.minasyan88@gmail.com

Հոդվածն ընդունվել է 27.02.2025–ին:
Ուղարկվել է գրախոսման՝ 28.02.2025–ին:
Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ե. Հակոբյան